ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1960 Общественные науки

Հ. Մ. Եգանյան

1919 Թ. ԱՆԳԼՈ-ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՈՒ ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Առաջին համաշխարհային պատերազմին նախորդող տարիներին Անգլիան և ցարական Ռուսաստանը Իրանը բաժանել էին ազդեցության ոլորտների, որը բնականաբար իր հետ բերում էր երկրի քաղաքական և տնտեսական ստրկացումը, մի հանգամանք, որը բավականին ծանր էր իրանական ժողովրդի համար։ Պատերազմի տարիներին, չնայած Իրանը չեզոք երկիր էր համարվում, սակայն նա դարձավ պատերազմական գործողությունների թատերաբեմ։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան շրջադարձային ազդեցություն ունեցավ Իրանում իշխող դրության վրա։ Ռևոլյուցիայի անմիջական ազդեցության ներքո 1917—1921 ԹԹ. Իրանում ծավալվեցին ազգային ազատագրական հզոր շարժումներ։

Իրանի ժողովրդական մասսաները ողջունեցին Սովետական կառավարության բոլոր այն ակտերը, որոնք ուղղված էին Իրանի անկախության և ազատության ամրապնդման նպատակին։

Սակայն, Իրանից ռուսական զորքերի հեռացմանը հետևեց անգլիական զորքերի առաջխաղացումը և ամբողջ Իրանի օկուպացիան։ Անգլիական իմպերիալիստների հետապնդած նպատակների մասին վկայում են հենց անգլիական պատմաբանները և քաղաքական գործիչները, որոնք ամեն կերպ աշխատում են «կարմիր վտանգի» քողի տակ արդարացնել իրենց զավթողական քաղաքականությունը։ Այսպես օրինակ, պատճառաբանելով այն «էֆեկտիվ հսկողության» անհրաժեշտությունը, որ անգլիացիները հաստատեցին Իրանում, Անգլիայի արտաքին գործերի մինիստր Քերզոնը իր մի պաշտոնական հուշագրում գրում էր. «Ռուսական ռևոլյուցիայից հետո Իրանի հյուսիսում բոլշևիկյան ներխուժման վտանգ ստեղծվեց։ Միևնույն ժամանակ հյուսիս-արևմուտքում թուրքերը և գերմանացիները, որոնք անառարկելիորեն գրավել էին Կովկասը, սպառնում էին ներթափանցել սահմանամերձ Ադրբեջանի նահանգը, որը մի պահ սպառնաց մայրաքաղաքին և համարյա ստիպեց պարսկական կառավարությանը փախուստի դիմել։ Այդ ժայթքումը կանխելու և այդ ծովով դեպի Ասիա մուտք գործելու գերմանացիների պլաններն խանգարելու համար մենք ստիպված ենք Բաղդատի ուղղությամբ ռազմական մի մեծ ուժ ուղարկել...»[1]։ Իրանական քաղաքական գործիչներից Աբդոլլահ Մոսթոֆին մերկացնելով Քերզոնի նման պնդումները, գրում է. «...Լորդ Քերզոնը հավակնում է, որ Անգլիան Իրանը փրկեց, նախ՝ գերմանացիների դավադրությունից, երկրորդ՝

[1] Documents on British Foreign Policy 1919–1939, First serils, vol. IV, 1919. London, 1952, էջ 1120.

թուրքերի հարձակումից և, երրորդ՝ բոլշևիկների ներխուժումից»։ Մոսթոֆին ավելացնում է, որ ռուսական զորքերը հեռանալուց հետո անգլիացիները գրավեցին հյուսիսային նահանգները, «բայց այդ ուժերի կենտրոնացումը՝ ոչ թե իրանցիներին պաշտպանելու, այլ Դենիկինին և Վրանգելին օգնելու համար էր»։ Մոսթոֆին պատասխանելով Քերզոնի հավակնությանը, որ իբր անգլիացիները Իրանը փրկեցին ռուսական բոլշևիկների հարձակումից, ասում է, որ դա ևս «փրկանությանը չի համապատասխանում»։ «Լորդ Քերզոնը ուզում է անգլիական ուժերի մի ամբողջ տարի Իրանում մնալը բոլշևիկների հարձակումներից Իրանը պաշտպանելու միջոցառում ներկայացնել... Գուցե կասեք, եթե դուք չլինեիք բոլշևիկները կգային և բոլոր իրանցիներին կենդանի կուլ կտային։ Ոչ, մեծապատիվ լորդ, այդպես չէ։ Ներողություն եմ խնդրում, ներեցեք, բոլշևիկները ձեր մի խումբ պարտված զինվորներից, որոնց դիմացկունությունն արդեն փորձել էին Դենիկինի և Վրանգելի դեմ մղած մարտերում և հատկապես Բաքվի կռիվներում, ոչ մի վախ չունեին և լավ գիտեին, թե դուք ինչ եք ձեզանից ներկայացնում»[2]։

Իրանում իրենց զավթողական քաղաքականությունը օրինականացնելու համար 1919 թ. օգոստոսի 9-ին անգլիական իմպերիալիստները Իրանին թելադրեցին անգլո-իրանական տխրահռչակ պայմանագիրը, երկիրը փաստորեն դարձնելով Անգլիայի պրոտեկտորատը։ 1919 թ. օգոստոսի 9-ին ստորագրված այս պայմանագիրը նպատակ ուներ անգլիացիների կողմից Իրանի փաստական անեքսիային իրավաբանական ձևակերպում տալ։

Պայմանագիրը կոչվում էր «Իրանի առաջադիմության և բարեկեցության համար բրիտանական օգնության մասին», որը ստորագրեցին Իրանի պրեմիեր-մինիստր Վոսուգ էդ-Դոլեն և Թեհրանում անգլիական դեսպան Քոքսը[3]։ Պայմանագրի հոդվածների ուսումնասիրումը ցույց է տալիս, որ այն շատ հեռու էր «Իրանի առաջադիմության և բարեկեցության» համար որևէ արժեք ունենալուց։

Այսպես. պայմանագրի երկրորդ հոդվածի համաձայն Անգլիան Իրան էր ուղարկում իր մասնագետներին, խորհրդականներին, իրանական տարբեր մինիստրությունները ղեկավարելու համար։ Այս հոդվածը ուղղակիորեն հակասում էր առաջին հոդվածին, քանի որ «անկախ» պետության մինիստրությունները պիտի ղեկավարեին անգլիացիները, որոնք բնականաբար ոչ թե Թեհրանի այլ Լոնդոնի կարգադրությունները պիտի կատարեին։ Այս հոդվածի համաձայն էր, որ դեռ պայմանագիրը չհաստատված, Իրան եկավ անգլիական ֆինանսական միսիան՝ էրմիտաժ Սմիտի գլխավորությամբ։ Անգլիական խորհրդականների գործունեության մասին Բալֆուրը գրում է. «Առավել ևս դժվար է հավատալ..., որ մի փոքր խումբ խորհրդականներ՝ առանց իրենց

---

[2] عبدالله مستوفی شرح زندگانی من یا تاریخ اجتماعی و اداری دوره قاجاریه قسمت اول از جلد سوم از دایره قرارداد و ثوق الدوله تا سقوط ضیاء الدین. تهران ۱۹٤۵ Արդուլլահ Մոսթոֆի, Իմ կենսագրությունը կամ Կաջարների դրության հասարակական ու ադմինիստրատիվ պատմությունը, երրորդ հատորի առաջին մասը, պայմանագիր ստորագրող Վոսուգ էդ-Դոլեի կաբինետից, մինչև Զիա էդ-Դինի անկումը, Թեհրան, 1945, էջ 195 (հետագայում Արդուլլահ Մոսթոֆի...)։

[3] Agreement between His Britanic Majesty's Government and the Persian Government signed at Teheran, August 1919, London, 1919.

կառավարության ուժեղ հովանավորության, կկարողանան անցկացնել այնպիսի ռեֆորմներ, որոնք տրամագծորեն հակառակ էին պարսիկների շահերին»[4]։

Երրորդ հոդվածի համաձայն Անգլիան խոստանում էր Իրան ուղարկել զինվորականներ և զենք՝ իրանական զինված ուժերը վերակազմելու համար։ Սա նշանակում է, որ Իրանում պետք է ստեղծվեր գործունակ մի բանակ՝ ռևոլյուցիոն շարժումները երկրի ներսում ճնշելու և Սովետական Ռուսաստանի նկատմամբ ապագայում կազմակերպվելիք ագրեսիվ պլաններին մասնակցելու համար։

Ըստ չորրորդ հոդվածի, վերոհիշյալ բոլոր միջոցառումները կենսագործելու համար Իրանին տրվում էր երկու միլիոն ստերլինգ վարկ՝ յոթը տոկոսով և յոթանասուն տարի ժամկետով։ Իրանը այդ վարկը ստանալով՝ էլ ավելի կախման մեջ էր ընկնում Անգլիայից, եթե չավելացնենք անգամ այն, որ այդ դումարի մի խոշոր մասը ուղղակիորեն պիտի գնար իրանական իշխող խավերի գրպանը, որպես օրինական, բայց քողարկված կաշառք։

Բալֆուրը, անդրադառնալով զինվորական և ֆինանսական այդ «օգնություններին», գրում է. «Նկատի ունենալով այն ռազմական և ֆինանսական օգնության չափը, որ Իրանը այդ ժամանակ ստանում էր բրիտանական կառավարությունից, դժվար էր պայմանագիրը համարել որպես երկու անկախ ու ազատ պետությունների միջև կնքված պայմանագիր»[5]։

Հինգերորդ և վեցերորդ հոդվածների համաձայն անգլիացիները իրենց ձեռքն էին վերցնում Իրանի տրանսպորտը և երկաթգծի կառուցման իրավունքը։ Մաքսային հարկերը նույնպես պետք է վերանայվեին հօգուտ Անգլիայի։

Անգլո-իրանական վերոհիշյալ պայմանագիրը, որը փաստորեն երկիրը վերածում էր Անգլիայի գաղութի, լայնորեն քննարկման է ենթարկվել անգլիական և իրանական պատմագրության մեջ։ Այդ հարցի շուրջը ստեղծվել է ընդարձակ գրականություն, և հենց այդ պատճառով էլ նպատակահարմար ենք գտնում որոշ մանրամասնությամբ կանգ առնել տարբեր հեղինակների տված գնահատականներին։

Անգլիական որոշ քաղաքական գործիչներ և պատմաբաններ աշխատել են արդարացնել Անգլիայի քաղաքականությունը Իրանի նկատմամբ, հայտարարելով, որ իբր Անգլո-իրանական պայմանագիրը նպատակ ուներ Իրանը փրկել քաոսային վիճակից և նրան տանել դեպի «բարգավաճում և պրոգրես»։ Պայմանագրի հեղինակ Քերզոնը իր հուշագրերից մեկում գրում էր, որ պայմանագիրը դեռ չի նշանակում, որ «մենք Իրանի համար մանդատ... ենք ստացել կամ կստանանք, որ Իրանը մեզ է հանձնել իր ազատությունների որևէ մասը... այլ իրանական կառավարությունը գիտակցելով, որ մենք Իրանի ճակատագրով սերտ շահագրգռված միակ հարևան մեծ պետությունն ենք, ի վիճակի ենք ու կամենում ենք օգնել նրան և այդ հարցում անշահախնդիր ենք, որոշեց իր ազատ կամքով խնդրել մեզ օգնելու Իրանին վերականգնելու իր բարեկեցությունը։ Եթե հարցնեն, թե, ինչո՞ւ մենք ընդհանրապես մեր վրա վերցրինք այդ պարտավորությունը և ինչո՞ւ Իրանը չթողինք իր ճակա-

[4] G. M. Balfour, Recent Happennings in Persia, London, 1922, էջ 118։
[5] Նույն աեղում, էջ 123։

տագրին, որպեսզի նա փտի իր գունեղ անկման մեջ, պատասխանը այն է, որ Իրանի աշխարհագրական դիրքը, այդ երկրում մեր ունեցած շահերի աստիճանը և մեր Արևելյան կայսրության ապագա անվտանգությունը ինչպես վերջին հիսուն տարիների ընթացքում, այնպես էլ ներկայումս, մեզ համար անկարելի է դարձնում անտարբեր լինել այն ամենի նկատմամբ, ինչ կատարվում է Իրանում... Դեռ ավելին, եթե Իրանը մենակ թողնվի, ապա հիմքեր կան վախենալու, որ նա կգրավվի հյուսիսից եկող բոլշևիկյան ազդեցությամբ։ Վերջապես, Իրանի հարավ-արևմտյան անկյունում մենք նավթային մեծ հարստություններ ունենք, որոնք սպասարկում են բրիտանական ծովային ուժին և որը մեզ իշխող դիրք է տալիս աշխարհի այդ մասում...»[6]։

Խոսելով պայմանագրի մասին, պատմաբան Վիլսոնը մի քայլ էլ առաջ է գնում, քան Քերզոնը։ Նա գրում է. «Ինչ վերաբերում է փաստաթղթի տեքստին, որը ոչ մի գաղտնի հոդված չուներ, ապա դա ներկայացնում էր մի խոհեմ և անկեղծ ծրագիր պարսկական ադմինիստրացիան վերականգնելու համար... Եթե մեջլիսը անմիջապես հրավիրվեր, նա հավանաբար կհաստատեր պայմանագիրը, որովհետև Թեհրանում կային մարդիկ, որոնք այդ պայմանագրի մեջ տեսնում էին ազգային վերածնունդի սաղմերը և գտնում էին, որ այն, ամեն պարագայում, ավելի պակաս վտանգավոր է, քան բոլշևիկյան ռեժիմը...»[7]։

Քերզոնի և Վիլսոնի նման բացատրությունները խիստ քննադատության են ենթարկել անգլիական այլ հեղինակներ։ Մերկացնելով Քերզոնի վարած քաղաքականությունը Իրանի նկատմամբ, Դենիսը գրում է. «Լորդ Քերզոնը Իրանի գործերի կապակցությամբ հեղինակություն էր համարվում, բայց ավելի շատ հին Իրանի, քան թե նորի։ Այդ պայմանագիրը իրականում շահի կառավարությունը դնում էր բրիտանական ղեկավարության տակ և փաստորեն, եթե ոչ անվանապես, հաստատում էր մի բրիտանական պրոտեկտորատ, և հենց, որպես այդպիսին, նա անհետացավ, քանի որ ոչ մի իրանական կառավարություն չէր համարձակվում վավերացնելու համար պայմանագիրը ներկայացնել մեջլիսին»[8]։

Իրանի նկատմամբ անգլիական իմպերիալիստների վարած քաղաքականության և 1919 թ. Անգլո-իրանական պայմանագրի ընդարձակ մերկացումներով հանդես է գալիս անգլիական ականավոր քաղաքական գործիչ Բալֆուրը. «Լորդ Քերզոնի,—գրում է նա,—այն հայտարարությունը, որ նա Իրանի լավագույն բարեկամն է, միայն զայրույթի, ծաղրի և արհամարհանքի մի պոռթկում առաջ բերեց ամբողջ երկրով մեկ, որտեղ նրան Իրանի խոշորագույն թշնամի և ճնշողն էին համարում»[9]։

Ըստ Բալֆուրի պայմանագիրը միակողմանի էր և մեծապես կասկած էր առաջացնում։ Նրա կարծիքով անգլիական կառավարության վարած քաղաքականությունը տանում էր դեպի կատաստրոֆ[10]։

---

[6] Documents on British Foreign Policy, 1919—1939, First series, vol. IV, 1919' London, 1952, էջ 1120։

[7] A. T. Wilson, Persia, London, 1932, էջ 141։

[8] Dennis, The Foreign Policies of Soviet Russia, էջ 237։

[9] G. M. Balfour, Recent Happennings in Persia, London, 1922, էջ 133։

[10] Նույն տեղում, էջ 126։

Անգլո-իրանական պայմանագրի ստրկացուցիչ բնույթը չէին կարողանում թաքցնել մինչև իսկ ամերիկյան կառավարող շրջանները, որոնք ելնելով իրենց իմպերիալիստական շահերից, առանձին դեպքերում խոսում էին պայմանագրի հետապնդած նպատակների մասին։

1919 թ. սեպտեմբերի 12-ին սենատոր Նոքսը ամերիկյան սենատի արտաքին գործերի հանձնաժողովում հայտարարեց, որ «Անգլո-իրանական՝ այդ պայմանագիրը Իրանի սուվերենությունը հանձնեց Մեծ Բրիտանիային»[11]։ Այնուհետև, հանդես գալով նույն հանձնաժողովի նիստերից մեկում, Իրանում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ռասելը հայտարարեց. «Բրիտանական կառավարության հետ կնքած այս նոր պայմանագրով Իրանը վաճառվել է Մեծ Բրիտանիային... Ասվում է, որ անգլիացիները պետք է ավանսավորեն 10 միլիոն դոլլար այդ պայմանագրի համար։ Տարօրինակ չէ, որ Անգլիան ուզում է այսպիսի անլեգալ ձևով և համարյա ձրի գնել մի երկիր, որը երեք անգամ ավելի մեծ է, քան Ֆրանսիան»[12]։

Ի՞նչպես են գնահատել պարսիկ հեղինակները անգլիական իմպերիալիստների այդ գաղութարարական քաղաքականությունը։

Պարսիկ բազմաթիվ հեղինակներից միայն երկուսն են հատկապես հանդես եկել Անգլիայի պաշտպանի դերում։ Դրանցից մեկը ինտելիջենս սերվիսի հին գործակալ տխրահռչակ Սեյիդ Զիա էդ-Դինն է, մի անձնավորություն, որի քառասունամյա քաղաքական գործունեությունը ամբողջովին նվիրված է եղել անգլիական իմպերիալիզմի շահերի պաշտպանությանը։

Պայմանագիրը ստորագրվելուց հետո Սեյիդ Զիա էդ-Դինը Վոսուգ էդ-Դոլեի կառավարության կողմից ուղարկվում է Բաքու որպես իրանական կառավարության արտակարգ լիազոր ներկայացուցիչ։ Այստեղ անգլիական իմպերիալիստների քաղաքականության դեմ առաջացած վրդովմունքը փարատելու նպատակով, նա 1920 թ. ռուսերեն լեզվով հրատարակեց մի գրքույկ, որտեղ ցինիկորեն փորձում էր պաշտպանել Անգլո-իրանական պայմանագիրը։ Գրքույկի առաջին իսկ էջում հեղինակը՝ խոսելով գիրքը հրատարակելու դրդապատճառների մասին, գրում է. «Իրանի վերածնունդի նոր էպոխան սկսվում է Անգլո-իրանական պայմանագրի ստորագրման պահից, մի խոշորագույն կարևորություն ունեցող ակտ, որի նշանակությունը ես ուզում եմ բացահայտել, քանի որ Անդրկովկաս գալու ժամանակվանից ես նկատում եմ, որ Անգլո-իրանական պայմանագիրը հասարակական կարծիքի և մամուլի կողմից մեկնաբանվում է ոչ իրական իմաստով և նշանակությամբ»[13]։

Իրանի նկատմամբ անցյալում անգլիական իմպերիալիստների էքսպանսիոնիստական քաղաքականությունը իր հովանավորության տակ վերցնելով, Սեյիդ Զիա էդ-Դինը գրում է, որ Անգլիան միջամտել է միայն այն դեպքերում, երբ նրա շահերը վտանգվել են Ռուսաստանի կողմից և հետապնդել է բացառապես մի նպատակ՝ պաշտպանել Իրանը Ռուսաստանի ագրեսիվ մտադրություններից[14]։

---

[11] Senate Documents, May 19—Nov. 19, 1919, vol. 10. էջ 1011։

[12] Նույն տեղում, էջ 1012—8։

[13] Сеид Зиа эддин Таба-Табаи, Новая эпоха в истории Персии и Англо-персидский договор, 2-ое изд., Баку, 1920, стр. 1.

[14] Նույն տեղում, էջ 2։

Խոսելով պատերազմից հետո Իրանում ստեղծված դրության և անգլիական իմպերիալիստների կողմից Իրանի օկուպացիայի մասին, հեղինակը գրում է. «Ո՞ւմ կարող էր Իրանը դիմել օգնություն խնդրելու։

...Միջին Արևելքի քաղաքականությամբ շահագրգռված բոլոր տերություններից միայն պատմության մեջ չտեսնված հեղինակություն և իշխանություն ունեցող Անգլիան էր գերիշխող դեր խաղում համաշխարհային քաղաքականության մեջ... Այսպիսով Իրանի խոշորագույն ճգնաժամի պահին Անգլիային դիմելը պատմական անհրաժեշտություն էր...

Մենք շատ լավ հասկանում ենք, որ մեր բոլոր իղձերը կարելի է իրականացնել միայն Անգլիայի համագործակցությամբ, քանի որ վերջինիս ճակատագիրը կապված է Իրանի ճակատագրի հետ։

...Եթե ես ասեմ, որ Անգլիայի հետ կնքած պայմանագրով մենք հասանք մեր բոլոր ցանկություններին և փափագներին, որի դիմաց նրան (Անգլիային—Հ. Ե.), բացի բարոյական շահից, ոչ մի նյութական օգուտ չենք տվել, ապա դա առաջ կբերի ընթերցողների զարմանքը»[15]։

Ինչպես տեսնում ենք, հեղինակը ինքն էլ է զգում, որ իր ասածները համոզեցուցիչ չեն և կարող են միայն «զարմանք» առաջ բերել։

Իսկ ի՞նչ նպատակ էր հետապնդում Անգլիան։ Սեյիդ Զիա էդ-Դինը պատասխանում է. «Ապագա Ռուսաստանի և արագ տեմպով ամբողջ Ասիայում տարածվող հսկայական ռևոլյուցիայի բավականին հավանական վտանգը սարսափելի սպառնալիք է հանդիսանում Անգլիայի համար։ Քաղաքակրթության տարածումը Իրանում, կարգ ու կանոնի ու անդորրի պահպանումը և երկրի հզորության վերականգնումը ինքնապաշտպանության համար, հանդիսանում են Անգլիայի կենսական շահերի ապահովման հիմնական պայմանները։

...Պե՞տք են արդյոք նոր փաստարկումներ և բացատրություններ այն պարզամիտներին, որոնք բղավում են, թե պարսկական կառավարությունը իր հայրենիքը վաճառեց Անգլիային»[16]։ Գնահատելով անգլիական իմպերիալիստների քաղաքականությունը Իրանում, հեղինակը հայտարարում է. «Ես համոզված եմ Իրանում Անգլիայի պետական հեռատեսական քաղաքականության նպատակահարմարությանը, որը ուղղված է պարսիկ ժողովրդի բարեկեցությանը և կատարյալ բացառում է այնպիսի ակտերի հնարավորությունը, որոնք հակասեին պարսիկ ժողովրդի իղձերին և ցանկություններին...»[17]։

Անգլիական իմպերիալիստների՝ Իրանում վարած քաղաքականության պաշտպանի դերում հանդես է գալիս նաև մի այլ պարսիկ հեղինակ՝ Մեհդի Մոջթահեդին, որը ինչպես ինքն է գրում, Իրանի և Անգլիայի հարաբերությունները որոշ ժամանակ ուսումնասիրելուց հետո այն արդյունքին է հասել, որ անգլիացիները երբեք Իրանի և իրանցիների նկատմամբ «վատ մտադրություն չեն ունեցել», հետևաբար ձեռնամուխ է եղել մի առանձին աշխատություն գրելու և «իր այդ համոզմունքը հաստատելու»[18]։

---

[15] Նույն տեղում, էջ 16—17։

[16] Նույն տեղում, էջ 18։

[17] Նույն տեղում։

[18] مهدی مجتهدی ایران و انگلیس تهران ۱۹٤۷ (Մեհդի Մոջթահեդի, Իրանը և Անգլիան, Թեհրան, 1947, էջ 3)։

Ըստ Մեհդի Մոջթահեդու, Անգլիայի հեղինակության անկման և իմպերիալիզմի դեմ մղված ազգային-ազատագրական շարժման ամբողջ հանցանքը ընկնում է Սովետների վրա, քանի որ «նրանք մտադիր էին բռնի կերպով իրենց գաղափարը տարածել ամբողջ աշխարհում», իսկ «անգլիացիները կոմունիզմի տարածմանը դեմ էին», հետևաբար Սովետները սկսեցին ընդարձակ և գիտական պրոպագանդա մղել ընդդեմ Անգլիայի «և այդ պետությանը ներկայացրին որպես ռեակցիայի ամրոց, նեխվածության կենտրոն և աշխատավորության ու աշխարհի ազատության թշնամի»[19]։

Հեղինակը հանգամանորեն վերլուծում է Անգլո-իրանական պայմանագիրը և հասնում է այնպիսի ցինիզմի, որ այն համարում է «Իրանի ազատասերների և հայրենասերների խոշոր հաղթանակը»[20]։

Տալով ամբողջ պայմանագրի գնահատականը, հեղինակը գրում է. «Ինչպես երևում է այն հետապնդում է Իրանի վերականգնման քաղաքականություն, որի համաձայն, հաղթահարելով իրանական ղեկավարների դիմադրությունը, Անգլիան ուզում էր իրականացնել այն ռեֆորմները, որոնց անցկացումը արգելակում էր ցարական Ռուսաստանը։ Անգլիական կառավարությունը օգտվելով Իրանում Ռուսաստանի բացակայությունից, իրագործեց իր այդ մտադրությունը»[21]։

Բայց վերոհիշյալ երկու հեղինակների նման գնահատականները ջախջախիչ հարված են ստանում իրանական բուրժուազիայի այլ պատմաբանների կողմից, որոնք խորը վերլուծելով անգլիական իմպերիալիստների գաղութարարական քաղաքականությունը, տալիս են համապատասխան ճիշտ գնահատական։ Օրինակ, Աբբաս Էկբալը «Իրանի ընդարձակ պատմությունը» իր աշխատության մեջ, որը միաժամանակ պաշտոնական ձեռնարկ է, գրում է. «Համաշխարհային պատերազմի վերջանալու պահին համարյա ամբողջ Իրանը անգլիացիների ազդեցության տակ ընկավ, և նրանք Իրանը այդ վիճակում պահելու համար խոչընդոտներ ստեղծեցին, որպեսզի Իրանի ներկայացուցիչները չկարողանան մասնակցել խաղաղության կոնֆերանսին։ Վերջապես 1337 թ. շավալ ամսին (1919 թ. օգոստոս) Իրանի կառավարությանը ստիպեցին մի նենգ պայմանագիր ստորագրել, որը հայտնի դարձավ որպես 1919 թ. պայմանագիր և Իրանի զինվորական, տնտեսական ու մաքսային բոլոր բնագավառները դնում էր անգլիական խորհրդատուների մոնոպոլ տրամադրության տակ և Իրանը դարձնում Բրիտանիայի պրոտեկտորատը»[22]։

Դոկտոր Աֆշարը Լոնդոնի համալսարանում քաղաքական գիտությունների դոկտորի կոչում ստանալու համար ներկայացրած իր դիսերտացիայում, խոսելով 1919 թ. պայմանագրի մասին գրում է. «Ինչ վերաբերում է 1919 թ. օգոստոսի 9-ի Անգլո-իրանական պայմանագրին, ապա մենք կարծում ենք, որ դա քաղաքական այնպիսի խոշոր սխալ է, որի նմանը երբեք չի եղել։ Այդ պայմանագիրը վերջին հաշվով վատ ծառայություն էր հենց Անգլիային։ Դա

---

[19] Նույն տեղում, էջ 21։

[20] Նույն տեղում, 103։

[21] Նույն տեղում։

[22] عباس اقبال تاریخ مفصل ایران از استیلای مغول تا انقراض قاجاریه تهران ۱۹٤۱ (Աբբաս Էկբալ, Իրանի ընդարձակ պատմությունը մոնղոլների տիրապետությունից մինչև կաջարների անկումը, Թեհրան, 1941, էջ 454)։

Անգլիայի դեմ տրամադրեց թե Իրանին և թե ուրիշ երկրներին, և վերջապես՝ դա մեծապես վարկաբեկեց Մեծն Բրիտանիայի հեղինակությունը և արժանապատվությունը։ Դիվանագիտական այս ակտը միաժամանակ թե՛ մնասակար էր և թե՛ անօգուտ»[23]։

Պարսիկ բազմաթիվ հեղինակներից հատկապես պետք է երկուսին հիշատակել, որոնք հանդես են եկել անգլիական իմպերիալիստների դաղութարարական քաղաքականության ամենասուր քննադատությամբ։ Դրանցից մեկը Արոլֆազլ Կասեմին է՝ «Սև պատմություն կամ ընտանիքների իշխանությունը Իրանում» աշխատության հեղինակը։ Կասեմին՝ անդրադառնալով անգլիական իմպերիալիստների ջերմ պաշտպան և պայմանագիրը ստորագրող ժամանակի պրեմիեր Վոսուգ էդ-Դոլեի ազգադավ քաղաքականությանը, գրում է. «Վոսուգ էդ-Դոլեի դավաճանության գլուխ գործոցը անգլիացիների հետ 1919 թ. պայմանագրի ստորագրումն էր»[24]։ Պատասխանելով Քերզոնի այն հայտարարությանը, որ Անգլիան Իրանին դնում է «բարյացակամ» պրոտեկտորատի տակ, հեղինակը գրում է. «Բարյացակամ պրոտեկտորատ տերմինը նման է դահիճի սրտացավ խրատին, որը դատապարտյալին ասում է, մի վախենա, գլուխդ մարմնից դպոկեմ ծաղկի պես։ Արդյոք մի որևէ ազգի պրոտեկտորատի և ստրկության գործում կարո՞ղ է բարյացակամ մտադրություն լինել»[25]։

Խոսելով անգլիական իմպերիալիստների հետապնդած նպատակների մասին, Կասեմին նշում է. «Սովետական իշխանություն ստեղծվելուց հետո այս նորաստեղծ պետության ազդեցության ծավալման առաջն առնելու համար անգլիացիները որոշեցին նրա շուրջը մի անթափանցելի երկաթյա քաղաքական պատ ստեղծել, որպեսզի նրանց քաղաքական իդեաները ճանապարհ չգտնեն դեպի դրսի աշխարհը՝ Անգլիայի գաղութների կենտրոնը։ Վոսուգ էդ-Դոլեի դեկլարացիան ցույց է տալիս, որ նա իր տերերի հակակոմունիստական նպատակներին լիովին տեղյակ էր։ ...Այսպիսով պետք է իմանալ, որ Վոսուգ էդ-Դոլեն ուրիշ ոչինչ չէր, քան Անգլիայի հնազանդ և ենթակա գործակալը որը ուզում էր մեզ հակակոմունիստական բլոկի մեջ մտցնել և նորաստեղծ պետության զայրույթն ու ատելությունը մեր դեմ ուղղել»[26]։

Անգլիական իմպերիալիստների հետապնդած քաղաքականության խորը մերկացումով հանդես է գալիս իրանական մի այլ գործիչ՝ Աբդոլահ Մոսթոֆին, իր «Իմ կենսագրությունը կամ Կաջարների շրջանի հասարակական և վարչական պատմությունը» աշխատության մեջ։

Մոսթոֆին դիմելով Վոսուգ էդ-Դոլեին գրում է. «Գուցե կարծում եք, որ Իրանը որևէ ուրիշ բան էլ ունի, որ դուք չեք նվիրել Անգլիային, և դրա համար տխրել եք, բայց մենք Ձեզ այդ կարծիքից և տխրությունից դուրս բերելու, ձեր սրտում ուրախություն մտցնելու համար ասում ենք. մի անհանգստացեք,

---

[23] Dr. Aphshar. La Politique Européenne en Perse. Quelque page de l'histoire diplomatic, 1931, էջ 161։

[24] ابوالفضل قاسمی. تاریخ سیاه یا حکومت خانواده‌ها در ایران ۳ خانواده قوام السلطنه بیران (Արոլֆազլ Կասեմի, Սև պատմություն կամ ընտանիքների իշխանությունը Իրանում, 3, Կավամ էս-Սալթանեի ընտանիքը, Թեհրան, 1952, էջ 153)։

[25] Նույն տեղում, էջ 154։

[26] Նույն տեղում, էջ 156։

հենց այս ծառայություններով, որ դուք անգլիացիներին կատարեցիք, նրանց իրանցիների ամեն ինչի տերը դարձրիք, կարող եք վստահ լինել, որ ինչպես Փարիզի զավեշտական թերթն է գրել, Իրանը հիսուն սանտիմով (մի արբասի) ծախեցիք անգլիացիներին»[27]։

Անգլիական իմպերիալիստների քաղաքականությունը, անգլո-իրանական պայմանագիրը և Վոսուգ էդ-Դոլեի կառավարության դավաճանական դիրքավորումը մեծ բողոք առաջացրեց ամբողջ Իրանում։ Երկրի տարբեր վայրերում ժողովուրդը ոտքի ելավ իմպերիալիստների և ներքին ռեակցիոն շրջանների այդ դավադրության դեմ, ամենուրեք տեղի ունեցան գործադուլներ և միտինգներ, իսկ որոշ նահանգներում գործը հասավ մինչև իսկ զինված ապրստամբության։ Համաժողովրդական այդ դիմադրության մասին չեն կարողանում չխոսել մինչև իսկ իմպերիալիստական շահերի ներկայացուցիչները։ Օրինակ, Քերզոնը 1919 թ. օգոստոսի 16-ին, պայմանագրի ստորագրումից մի քանի օր հետո, մի հարցում էր ուղարկել Քոքսին այն կապակցությամբ, թե եվրոպական մի շարք թերթեր գրում են, «որ պայմանագիրը հասարակական կարծիքի կողմից լավ չի ընդունվել։ Ի՞նչ փաստեր կան այդ մասին։» Իսկ անգլիական «Թայմզ» թերթի թղթակիցը Թեհրանից այդ օրերին հաղորդում էր. «Ամեն օր աճում է Բրիտանիայի հակառակորդների թիվը»[30]։

Անգլիական պատմաբան Թեմաերլեյը իր «Փարիզի խաղաղության կոնֆերանսի պատմությունը» մեծածավալ աշխատության մեջ «Իրանի հակառակությունը պայմանագրին» վերնագիրը կրող հատվածում գրում է. «Հենց որ պայմանագիրը հրապարակվեց՝ բոլոր կողմերից հանդիպեց թշնամական քննադատության»[31]։

Անգլո-իրանական պայմանագրի առաջացրած համաժողովրդական խոր վրդովմունքի մասին են վկայում նաև ամերիկյան պաշտոնական ներկայացուցիչների զեկուցումները։ Թեհրանում ամերիկյան դեսպան Քայդվելը 1919 թ. օգոստոսի 28-ին Վաշինգտոն ուղարկած իր զեկուցման մեջ գրում էր. «Վերջին պայմանագրի հանդեպ հասարակական զգացմունքների վճռական թշնամանքը մնում է անփոփոխ։ Երեկ երեկոյան նախկին կաբինետի մի խումբ պաշտոնյաներ և քաղաքացիներ այցելեցին պրեմիեր մինիստրին՝ հայտնելու իրենց վրդովմունքն ու բողոքը։ Բողոքի բազմաթիվ միտինգներ տեղի ունեցան։ Որոշ գավառական քաղաքներ, որպես բողոքի ակտ, փակեցին շուկաները։ ...Շատ պարսիկներ ազնվորեն հավատացած են, որ պայմանագիրը վերջ է տալիս Իրանի անկախությանը...»[32]։

Թավրիզի ամերիկյան հյուպատոսի զեկուցումը նույնպես խոսում է այն մասին, որ Ադրբեջանի ժողովուրդը պայմանագիրը ընդունեց մեծ դժգոհությամբ։ «Իրանի հետ Անգլիայի ունեցած պայմանագրի մի հատվածը,— գրում է հյուպատոսը,— հրապարակվեց այստեղ և բոլոր դասակարգերը այն ընդունեցին մեծ դժգոհությամբ, բացի որոշ շահագրգռված խմբերից և մարդ-

[27] Արդոլյան Մոսթոֆի... էջ 28։

[28] Նույն տեղում, էջ 103—104։

[29] Documents on British Foreign Policy 1919—1939, First series, vol. IV, 1919. London, 1952, էջ 1933։

[30] „Times", May 16, 1920.

[31] H. W. V. Temperley, A History of the Peace Conference of Paris, vol. VI, London, 1924, էջ 213։

[32] Foreign Relations of the United States, 1919, vol. 2, p. 701—702։

կանցից, ինչպես, օրինակ՝ որոշ առևտրականներից, որոնք ակնկալիքներ ունեն ստեղծված դրությունից...»[33]։

Համաժողովրդական վրդովմունքի փաստեր են հաղորդում նաև իրանական բուրժուական պատմաբանները։ Օրինակ, Բահարը գրում է. «1919 թ. Վոսուգ էդ-Դոլեի պայմանագիրը Անգլիայի հետ քննարկվեց Իրանում և հարված ստացավ բոլոր դասակարգերի և պարտիաների կողմից՝ թե՛ ձախ և թե՛ աջ»[34]։ Իրանի ժամանակակից ականավոր քաղաքական գործիչ Հոսեյն Մաքքին իր «Իրանի քսանամյա պատմությունը» արժեքավոր աշխատության մեջ, պատկերավոր կերպով խոսելով պայմանագրի առաջացրած վրդովմունքի մասին գրում է. «1919 թ. պայմանագրի ստորագրումը Իրանի նոր պատմության կարևորագույն դեպքերից մեկն է։ Այս պայմանագիրը նման էր մի հարիչի, որը ամուր խփվեց ժողովրդի նվազալարերին և բոլոր դասակարգերից հակառակության ուժեղ ձայն բարձրացավ։ Ժողովրդի բոլոր խավերը պայմանագրին հակառակ էին, բացի մի քանի հոգուց, որոնք Վոսուգ էդ-Դոլեի մտերիմներն ու համախոհներն էին»[35]։

Հետաքրքրական է նաև հետևյալ փաստը, Թիֆլիսում Անգլիական ներկայացուցիչ Վարդրոփը 1919 թ. նոյեմբերի 29-ին Քերզոնին ուղարկած իր նամակով հաղորդում է, որ այնտեղ տարածվել է Շվեյցարիայում «տպագրված մի «հակաանգլիական պրոկլամացիա», որը վերնագրված է «Appel du Parti national Persan» («Պարսիկների ազգային պարտիայի կոչը») և ստորագրված է Այն-Լամ-Բեր։ Մանիֆեստի մեջ գրված է. «Հինգ տարի իմպերիալիզմի դեմ բողոքելուց հետո Մեծ Բրիտանիան այսօր առաջարկում է աննեքսիայի ենթարկել Իրանը։ Թեհրանում ստորագրված պայմանագիրը մեզ զրկում է անկախությունից։ Ոմանք պնդում են, որ այդ կոնվենցիան վայելում է պարսիկ ժողովրդի հավանությունը։ Այդ պնդումը սուտ է»[36]։

Պայմանագրի դեմ առաջացած բողոքը այնպիսի լայն ծավալ ստացավ, որ համաժողովրդական պայքարի, և քաղաքական իրադարձությունների հետագա զարգացման հետևանքով, 1921 թ. պայմանագիրը չեղյալ համարվեց։

* * *

Այսպիսով, ինչպես տեսանք, 1919 թ. Անգլո-իրանական ստրկացուցիչ պայմանագիրը, որի իրականացումը երկիրը կվերածեր անգլիական գաղութի, այն կերպով քննարկվել է Իրանական և Անգլիական պատմագրության մեջ։ Չնայած որոշ ռեակցիոն պատմաբանների փորձերին՝ պաշտպանելու պայմանագիրը և այն ներկայացնելու որպես Իրանի շահերին ծառայող մի ակտ, հեղինակների դերակշռող մասը մերկացրել է Անգլիայի հետապնդած գաղութարարական նպատակները և Իրանական իշխող խավերի ազգադավ քաղաքականությունը։

---

[33] Նույն տեղում, էջ 702։

[34] Բահար..., էջ 30։

[35] حسین مکی تاریخ بیست ساله ایران جلد اول کودتای ۱۲۹۹ تهران ۱۹٤۵

Հոսեյն Մաքքի, Իրանի քսանամյա պատմությունը, հատ. առաջին, 1299 թ. հեղաշրջումը, Թեհրան, 1945, էջ 2։

[36] Documents on British Foreign Policy 1919—1939, First series vol. IV, 1919, London, 1952, p. 1042։